ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Բյուջեում նախատեսվող փոփոխությունների /փոփոխված/

Հիմք ընդունելով 2023 թվականի նոյեմբերի 21-ի Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության բաժնի գլխավոր մասնագետի ժ/պ Վեյնամին Թանգյանի զեկուցագիրը՝ ավագանու որոշման նախագծով առաջարկվում է ֆոնդային բյուջեի 04.5.1 ծրագիր 5113 հոդվածից՝

1. 5600000 /հինգ միլիոն վեց հարյուր հազար/ ՀՀ դրամ տեղափոխել 09.5.1 ծրագիր 5113 հոդված՝ որպես Սիսիան համայնքի Աղվան Մինասյանի անվան արվեստի և ստեղծագործական կենտրոն ՀՈԱԿ-ի վարչական շենքի կապիտալ վերանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազման, փորձաքննության և սեյսմիկ եզրակացության համար:

Հիմք ընդունելով 2023 թվականի նոյեմբերի 23-ի Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության բաժնի գլխավոր մասնագետի ժ/պ Վեյնամին Թանգյանի զեկուցագիրը՝ ավագանու որոշման նախագծով առաջարկվում է վարչական բյուջեի պահուստյայի ֆոնդի 11.1.2 ծրագիր 4891 հոդվածից՝

2. 400000 (չորս հարյուր հազար) ՀՀ դրամ տեղափոխել 01.6.1 ծրագիր 4241 հոդված՝ Սիսիան համայնքի թվով 3 բնակավայրերի խմելու ջրի քլորացման ծառայություններ ձեռքբերելու համար:

Վարչական բյուջեի եկամուտներն ավելացնել 10537271 (տաս միլիոն հինգ հարյուր երեսունյոթ հազար երկու հարյուր յոթանասունմեկ) ՀՀ դրամ, որպես այլ դոտացիաներ՝ տրամադրված պետության կողմից:

3. Վերոնշյալ 10537271 (տաս միլիոն հինգ հարյուր երեսունյոթ հազար երկու հարյուր յոթանասունմեկ) ՀՀ դրամից 10000000 (տասը միլիոն) ՀՀ դրամ ավելացնել 04.2.1 (Գյուղատնտեսություն) ծրագրի 4729 հոդվածին (Այլ նպաստներ բյուջեից) իսկ 537271(հինգ հարյուր երեսունյոթ հազար երկու հարյուր յոթանասունմեկ) ՀՀ դրամ ավելացնել 01.1.1 (Օրենսդիր և գործ.մարմիններ, պետ.կառավարում) ծրագրի 4264 հոդվածին (Տրանսպորտային նյութեր), որպես համայնքի ղեկավարի կողմից հաստատված մոնիթորինգային հանձնաժողովին՝ համատարած մոնիթորինգի աշխատանքներն իրականացնելու համար պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցություն:

Սիսիան համայնքի Ադամյան, Իսրաելյան և Պարույր Սևակ փողոցների կապիտալ վերանորոգման աշխատանքների համար, պետության մասնաբաժինը վճարելու նպատակով նախատեսվում է 04.5.1 ծրագիր 5113 հոդվածում ավելացնել 223180215,3 (երկու հարյուր քսաներեք միլիոն մեկ հարյուր ութսուն հազար երկու հարյուր տասնհինգ ամբողջ երեք տասնորդական) ՀՀ դրամ, ինչպես նաև նախկին Գորայք համայնքի թվով 4 բնակավայրեր մանկական խաղահրապարակների կառուցման աշխատանքների համար նախատեսվում է 08.6.1 ծրագիր 5113 հոդվածում ավելացնել 8345802 (ութ միլիոն երեք հարյուր քառասունհինգ հազար ութ հարյուր երկու) ՀՀ դրամ և որն տրամադվելու է պետության կողմից և պլանավորվելու է ֆոնդային բյուջեի /ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ԿԱՊԻՏԱԼ ԾԱԽՍԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ (ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐ)/ եկամտային մասում:

Ֆինանսատնտեսական բաժնի պետ Դ. Այվազյան

01.12.2023թ.

ՏԵՂԵԿԱՆՔ

Սույն նախագծի ընդունումից հետո համայնքի բյուջեի եկամուտներն ու ծախսերը կավելանա 242063288.3 (երկու հարյուր քառասուներկու միլիոն վաթսուներեք հազար երկու հարյուր ութսունութ ամբողջ երեք տասնորդական) ՀՀ դրամով:

Ֆինանսատնտեսական բաժնի պետ Դ. Այվազյան

01.12.2023թ.